# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42-Ա

### ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 64-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետով, ՀՀ կառավարության 26 մայիսի 2016թվականի «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչներ սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչ՝ Միրմանով Զաքարի Հովհաննիսյանի դիմումը, հաշվի առնելով, որ օտարվող հողամասը 1998թվականից փաստացի տիրապետվում է Միրմանով Զաքարի Հովհաննիսյանի կողմից, ***որոշում եմ՝***

1. ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաքացի Միրմանով Զաքարի Հովհաննիսյանին (ծնվ.01.07.1932թ, անձ.՝ AM0514069 տրված 11.11.2011թ 048-ի կողմից) պատկանող առևտրի օբյեկտին հարակից, 1-ին փողոց 28/3 հասցեում գտնվող 0.0093հա հողատարածքը (կադաստրային ծածկագիրը՝ 04-090-0009-0031) ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել Միրմանով Հովհաննիսյանին, 1մ$^2$-810դրամ արժեքով:
2. Օտարվող հողատարածքի վճարի չափը կկազմի՝ 75.330(յոթանասուն հինգ հազար երեք հարյուր երեսուն)դրամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միրմանով Հովհաննիսյանի կողմից սահմանված վճարը կատարելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. սեպտեմբերի 12
Գ. Վարդանաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

14 սեպտեմբերի 2017թվականի N 43-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի ''ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անվանակոչման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին'' N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2010 թվականի ապրիլի 26-ի ''Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին'' թիվ 30 որոշումը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի բնակիչ Վաղինակ Պողոսյանին՝ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի հասարակական կառուցապատման հողատարածքին (ծածկագիր 023-004), տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1 տարածք:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2017թ. 09 14
գ.Վարդանաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 44-Ա

### ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի ''ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անվանակոչման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման և հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին'' N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2010 թվականի ապրիլի 26-ի ''Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին'' թիվ 30 որոշումը, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման 0.0138հա հողատարածքին և 0.0362հա մակերեսով այլ հողերին (ծածկագիր 024-001), տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 1-ին փողոց թիվ 26/2 տարածք:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:Իսկականի հետ ճիշտ է:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

20<u>17</u> թ. <u>09</u> <u>29</u>
գ.Վարդանաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 20

ԼԻԼԻԹ ՍԵՐՈԲՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Վարդանաշեն համայնքի գրադարանի վարիչ՝ Լիլիթ Սերոբյանի 02.08.2017թվականի դիմումը, ***կարգադրում եմ՝***

1. Վարդանաշեն համայնքի գրադարանի վարիչ՝ Լիլիթ Քերովբի Սերոբյանին 2017թվականի օգոստոսի 31-ից ազատել աշխատանքից՝ իր դիմումի համաձայն:
2. Լիլիթ Սերոբյանին սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2017թ. 08 31
գ.Վարդանաշեն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 21

ԷԴԻԿ ՍԱՐԳՍԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Վարդանաշեն համայնքի ղեկավարի տեղակալի կողմից իր աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն և պատշաճ կատարելու հանգամանքը, ***կարգադրում եմ՝***

1. Վարդանաշեն համայնքի ղեկավարի տեղակալ՝ Էդիկ Սարգսի Զաքարյանին որպես խրախուսանք տալ պարգևատրում իր մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի կրկնապատիկի չափով:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2017թ. 09 26
գ.Վարդանաշեն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 22

ՏԱԹԵՎ ԽԱՉԻԿԻ ԵՍԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար, ***կարգադրում եմ՝***

1. Վարդանաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ՝ Տաթև Խաչիկի Եսայանին որպես խրախուսանք տալ պարգևատրում իր մեկ ամսվա պաշտոնային դրուքաչափով:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17թ. 09 26
գ.Վարդանաշեն